ԱՐՏԵՄ ԱԼԻԽԱՆՅԱՆ

Հայ նշանավոր ֆիզիկոս, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱ ակադեմիկոս, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ Արտեմ Ալիխանյանը ծնվել է 1908 թ. Թիֆլիսում: Ավարտել է Լենինգրադի (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) համալսարանը և աշխատանքի անցել Լենինգրադի ֆիզիկատեխնիկական ինստիտուտում:

Նա հետազոտություններ է կատարել միջուկային ֆիզիկայի, տարրական մասնիկների և տիեզերական ճառագայթների ոլորտում, զբաղվել է արագացուցիչների ստեղծման տեսական ու գործնական հարցերով: Այդ ոլորտներում նա կատարել է բազմաթիվ խոշոր հայտնագործություններ:

1942 թ. նա իր եղբայր Ալիխանովի հետ հիմնադրել է Արագածի տիեզերական ճառագայթների հետազոտման կայանը: Նրա նախաձեռնությամբ Երևանում ստեղծվեց ժամանակի ամենահզոր էլեկտրոնային արագացուցիչը (ԱՐՈՒՍ): Իր Եղբայր Աբրահամ Ալիխանյանի հետ 1943 թ. նրանք ստեղծեցին նաև այսօր հայտնի Երևանի ֆիզիկայի ինստիտուտը (ԵՐՖԻ):

Ալիխանյան եղբայրների անունով կոչվել է Երևանի փողոցներից մեկը, իսկ Երևանի պետական համալսարանում սահմանվել է նրանց անվամբ կրթաթոշակ: Նա մահացել է 1978 թ. և թաղված է Երևանի ազգային պանթեոնում:

Նրա եղբայր Աբրահամ Ալիխանյանը (Ալիխանովը) կառուցել է Խորհրդային միության առաջին միջուկային ռեակտորը և հիմնադրել Մոսկվայի տեսական և փորձարարական ֆիզիկայի ինստիտուտը: Երկու եղբայրներով հիմնել են Հայաստանի գիտությունների ակադեմիան:

Արտեմ Ալիխանյանի կյանքի մասին է պատմում «Բարև, ես եմ» կինոնկարը, որ-տեղ գլխավոր դերը խաղում է Արմեն Ջիգարխանյանը:

Արտեմ Ալիխանյանի մասին ռուս հայտնի ֆիզիկոս Ա. Միգդալն ասել է. «Նրա ուսերին էր ընկել իր հայրենիքի դիմագիծը փոխելու ճակատագիրը, և որպես Հայաստանում ֆիզիկայի հիմնադիր՝ նա իր հատուկ տեղն ունի երկրի խոշորագույն ջահակիրների շարքում»:

Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայում (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ) գործում է նրան նվիրված թանգարան, որտեղ ներկայացված են Հայաստանում ֆիզիկայի հայր համարվող Արտեմ Ալիխանյանի անձնական իրերը, փաստաթղթերն ու լուսանկարները:

Արտեմ Ալիխանյանը անտարբեր չէր արվեստի նկատմամբ: Հայ մեծ նկարիչ Մարտիրոս Սարյանը նրան է նվիրել Արագածի իր այս նկարը: